



Համար, որ ամեն վայրկեան և ամեն ժամանակ շրջապատած մեր չորս կողմը՝ գեղածիծաղ կրող-բողն, հպատակուած բնութեան Արարչապետի սահմանին. որպէս զի իրենց ծնողական պարտաւորութիւնները կատարելով՝ իրենց որդիքը անբան անասուններից կարողանան զանազանութիւն Որբան հետեղութիւն և ջանք է հարկաւոր այս քնքուշ և նազելի գործը զուիս տանելոյ Համար, եթէ որ մեր մայրերը իմանային թէ՛ ի՞նչ փառաւոր պաշտօն ունի դաստիարակութիւնը մարդկային ընկերութեան մէջ, իրենց ձեռքով ի՞նչ յառաջդիմութիւններ կանէին, էնպէս որ քիչ ժամանակում Հայք և Հայաստանի ժայռերը կերպարաւորուի կլինէին. եթէ որ մեր մայրերը Եւրոպայի մայրերի նման մտածէին թէ՛ իւրեանց մանկանց նորածաղիկ կեանքի ապագայ երջանկութիւնը՝ իրենց նոցա դաստիարակութիւն տալէն կախուած է, որչափ տարբեր կերպով կ'մտածէին դաստիարակութեան վերայ: Մի՞թէ չէին ջանալ օրից օր աղջկանց դպրոցների թիւը շատացնել, որոց մէջ Հայաստանի Համար աղնուախարայ մայրեր պատրաստեն, որ ժամանակաւ կարողանան իրենց քնքուշ մայրական գրկի վմէջ՝ իրենց երկանց ծննդի մարմնական անդի հետ հոգեջ սնունդը դաստիարակել, որպէս զի Մայր Բնութեան ամեն ժառանգելուն արժանի լինին. Եւրոպայի մայրերը իմացան որ՝ ուսումը և դաստիարակութիւնը միայն արական սեռի մէջ ծաղկելով ոչինչ օգուտ չէ կարող բերել, և ազգի առաջադիմութեան անիւնները շատ դանդաղ կերթայ, այնուհետեւ սկսեցին ուսումը և դաստիարակութիւնը սփռել իգական սեռի մէջ էլ, Տեսան որ ի՞նչ նշանակութիւն ունի աղջկանց դաստիարակութիւնը. տեսան որ քիչ ժամանակի մէջ Եւրոպան ուսումնական գիտերով զարգարուած, երկրագնդի ուրիշ մասների առաջին բարձր ի զուի կ'պանծայր դիւցազնական հպարտութեամբ մրցանակ առած, առաջարկելով իւր դաստիարակեալ շառաւիղները: Ե՞րբ պէտք է այս ամենաքաղցր զգացմունքը մեր մայրերի օրտի մէջ էլ բորբոքի: Ե՞րբ պէտք է բնութեան այս զուարթ ազգեցութիւն տուող արիւնը նոցա երակներումը կարկաշատահ առաւակների նման կամարած և խաղայ, Մի՞թէ մեր մայրերը չեն ուղիղ ունենալ այս-

պիսի զուարթութիւն: Մի՞թէ Հայաստանը կարօտ չէ ունենալ պիպիսի Մայրեր—կարօտ է. մէկ էլ և միշտ կանամ. կարօտ է. Այն ի՞նչ երջանկութիւն պէտք է համարած մօր համար, երբ կուենայ մատենագիր օրիորդներ, պարմանք չէ. Եւրոպայ մատենագիր օրիորդք և տիկնայք տեսնելը սովորական բան է, որոց դրուածքը միշտ մեզ հասած կ'տեսնեմք: Քանի՞սը կայ Հայաստանի մէջ, ցուցի՛ր՝ եղբայր, և Հայաստանը պատրաստ է առաջինը դուրս ածուած ըրարիովներով պատկերու և ոսկեհուռ մանեակը նորա պարանոցը ձգելու. Եւրոպայ ուսումը ոչ թէ միայն հարուստների սրտումը կ'ծագի, այլ և բնուակիրները և կառավարները, էնպէս որ նոցա ձեռքին լրագիր տանելը սովորական բան դարձած է. Ե՞րբ պիտի մեր հարուստների սրտի մէջ այս եռանդը ծաւալի, կարծեմ ոչ երբէք. որովհետեւ ներկայ լուսաւոր ժամանակում կ'տեսնեմք որ, իրենց որդեղ դաստիարակութեան համար կ'լինային ամենափոքր զուամբը, կ'ատեն գիտութիւնը, կ'ողջագուրեն տղիւտութեան խաւարը: Մի՞թէ այսպիսի կերպիւ ազգը կարող է առաջանալ. Երբեք մեր Հայաստանը կարող է ուրիշ երկիրների առաջին հակապարհ հպարտանալ, երբոր առաջարկելու համար դաստիարակեալ և լուսաւորեալ հարազատներ չ'ունի Ռ'հ, երանի կրկնէր, որ՝ Աստուած ողջ ձմեռը քնող անասունների նիւջը ուսման անմեղութեան գրկումը սնած հոգիների վերայ ձգէր, որ չ'տեսնէին ազգի պակասութիւնը, շտննէին նորա այս դժուարութիւնը և այս անպայել ուսումնատեղութիւնը: Ռ'հ, երանի՛ այն քաղաքին և այն ազգին, որոյ մէջ ուսումը և դաստիարակութիւնը երկու արական և իգական սեռերի մէջ կ'ծաղկի, այն տեղ է յաւերժական ցնծութիւն. այնտեղ է մշտաւ բերկրութիւն, խորհրդաւոր խաղաղութիւն և ազգաց միարանութիւն: Ամենայն տեղ կեանք և ամենայն տեղ երջանկութիւն երանաւետ: Այսպէս մեր ցանկալի Ուսումը տեսնելով իրեն որդիքը տղիւտութեան թանձրամած խաւարը պատած, յիշելով Հայոց Հին ուսումնասիրութիւնը Առաւմտահայոց ժամանակը, շատ տարիներ կ'ողբար ազգի ցաւը: Աւերջապէս ամենաբարեւատածը պարգեւեց Արարտեան սուրբ Գահին՝ մէկ

նոր Հառաիդ, որ կարեկից եղաւ Սբարաբի յաւին հետ, ու սկսեց Հայաստանի համար մէկ անջինջ արծան կանգնեցնել. Սբարաբի ամապրով իւր հարազատների ականջներումը ուսման և յառաջդիմութեան հնարքները տարիողել, որպէս զի թողուն ապիտումիւնը և լուսաւորութեան ետեւէն դնան: Ահա ո՞վ ընթերցասէր եղբարք, եկէք ամենեքեանքս համախումբ ժողով կազմած դառնանք զէպի Սբարաբի ասելով, "հանիր քո սգոյ շորերը ո՞վ որդեակեր Սբարաբի, թող ուրախութեան ծիածանը փայլի քո սրտուս, հպարտ, ազդի ջաւը լսցող, արտասուածորմ աչքերի մէջ, պատրաստ եմք այսուհետեւ ապիտումեան գաղտնի պուխը ջախջախել, անմեղութեամբ սնած օրիորդաց լուսաւորութեան ետեւէն դնալ. պատրաստ եմք ամենայն տեղ օրիորդաց դպրոցների թիւը շատացնել, ամենայն տեղ դաստիարակութիւնը սփռել, Պատրաստ եմք մեր անձը, մեր ստացուածքը քեզ համար զոհ մատուցանել, կ'ընամք այսուհետեւ քո արժանաւիշատակ անուանը արժանաւոր զաւակ լինիլ և Հայաստանի համար մայրասէր որդիք պատրաստուիլ":

Հարաւորութիւն II. Վարդապետաց

է Նոյն:

Ինքնագիրութեան Այստեղի Անուագիր

Վրաստանի Գարթլ նահանգի մէջ Ախալքալար գիւղն, որ Գորի քաղաքից հեռի է իրրեւ քրտան ասպարիզով, և կանկանի նորա արեւելեան հարաւային կողմը, իւր մեծատարած արգաւանդ դաշտօրէիք, Գետակներու և առուակներու ընթացքով, իւր զօրաւոր և բարեխառն օդոյն քաղցրութեամբ, հարթածաւալ զրիւք և բնորոշ ապրեակց, բուրաստանաց և ծառախիտ պարտիզաց առատութեամբ հետադոտ ճանապարհորդիմը աչաց առաջ բնութեան զեղաղուարճ տեսարաններէն մէկն կարէ համարուիլ, Այս գիւղին մէջ մեր աղդէն կ'գտնուի մօտ երկու հարիւր տուն բնակիչ, որոնք ըստ բանաւոր աւանդութեան՝ գաղթական կ'կարծուին Հայաստանի Արցախ և Գանձակու նահանգներէն, և ունին մի փոքրիկ եկեղեցի յա-

նուն Աստուածամոր կուսին, Այս ժողովուրդ կիսով մասամբ կ'արապին երկրագործութեամբ, որոց անխնջ վաստակոյ՝ բնութիւնն չի զննար հատուցանել իւր լիարաջիւ ծոցէն բերոց և սրմնեաց առատաձեռն առիտսիք. իսկ մնացեալք երկրագործութեամբ և գիւղին պիտոյից համեմատ արուեստներով, Ընդ հանրապէս զուրկ են Հայկական լեզուախօսութենէ, բայց մէկ քանիսից, որոնք զանազան քաղաքները առետրական յարաբերութեամբ մանաւորապէս Հայերէնի ընտելացած են, Աստի մերազնեայ հայրենասէր ուղեւորներէն մէկն թէպէտ և 'ի սկզբան՝ ինչպէս որ նահանգիս շատ զիւղօրայքը, նոյնպէս և այս գիւղը միտած ժամանակ կ'ստիպուի իւր բնական լեզուն թողուլ, իւր համարին եղբարց հետ օտար բարբառով խօսել, որով և իրաւացի տխրութեամբ զգածուիլ. սակայն ոչ սակաւ կ'միտիմարուի, երբոր իւր քայլքը երկուստեք ցանկապատ այդեաց ճանապարհով զէպի գիւղին միջամուր ընդ հարաւ յառաջ կ'վարէ, վասնզի նոյն ժամայն կ'հնչեն իւր ականջին Հայկական լեզուախօսութեան և ընթերցանութեան ձայներ մանկական բերաններէն՝ դատարարութեամբ մի եկեղեցական պաշտօնէի, որն որ նահապետական հիւրասիրութեան ժպիտ երեսին ուրախութեամբ ուղեւորին կ'ընդունաճէ, գրկաբաց սիրով իւր տունը կ'հրաւիրէ և սիրալիր հացկերութով կ'պատուէ: Այս բարեմիտ եկեղեցական Յովհաննէս Քահանայ տէր Գալստեանցն է, որ ոչ միայն հիւրընկալութեամբ, մարդասիրական զգացմամբ և համեստ անշահախնդիր բնաւորութեամբ հռչակուած է, այլև Տիկիխու ներսիսեան դպրոցի մէջ զովկի յառաջդիմութեամբ իւր ուսման ընթացքը աւարտելով, այս գիւղիս վերայ հովուական պաշտօն ստանալու օրէն սկսեալ չկամեցաւ իւր բանաւոր հօտին բարոյական հարուածոց վերայ անտարբեր աչօք նայիլ, այլ զանազան արգելքներու յաղթելով և կանխակալ պաշարմանց զէմ մաքսուելով, սկսաւ գիւղական Հայ օրիորդները և տղայքը ձրի դաստիարակութեամբ և շատ անգամ ձրի մատնաներ բաշխելով կրթել 'ի Հայ, Ռուս և 'ի Վրաց լեզուս: Բո՞ղ այսմ վկայեն առ նահապետական բազմաթիւ այցելու ականատեսքս: Ո՞չ այսչափ միայն, այլև այս բարեջան Քահանայիս